

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑՈՒ «ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ»-Ը

2. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

Հայ դավանաբանական մտքի պատմության մեջ բեղմնավոր է XI դարը: Դավանաբանական պայքարի այս շրջափուլում է հանդես գալիս Սանահնի դպրոցի ներկայացուցիչ, մատենագիր Անանիա վարդապետ Սանահնեցին (Հաղբատեցին): Մի շարք կարևոր երկերից բացի Անանիա Սանահնեցին հեղինակ է դավանաբանական մի աշխատության, որ ձեռագրերում հանդիպում է «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» կամ «Լուծումն մաքառման երկաբնակացն, որք ի կարծիս ճշմարտութեան անյարմար դաւանեն երկակս ի մինն մուծանել բնութիւն» (այսուհետև՝ «Հակաճառություն») խորագրերով: «Հակաճառություն» շարադրման շարժառիթը եթե ոչ ուղղակի, ապա գոնե անուղղակի կերպով կարելի է կապել Հայաստանում XI դարի կեսերից սկսած քաղկեդոնական եպիսկոպոսությունների սպառնալից շափերի հասնող աճի հետ¹: Նման բնույթի երկերի ստեղծումը XI (և ոչ միայն XI) դարում նպատակ ունեն գաղափարական դիմագրավման ոգի արթնացնել հայոց մէջ ընդդեմ Բյուզանդիայի քաղաքական նկրտումների: Լինելով դավանաբանական կարևորություն ներկայացնող մի աշխատություն, գործը պետք է որ գրված լիներ փորձ ու վաստակ ունեցող, արդեն տառեց հեղինակի կողմից: Եվ հիրավի, դատելով այն հանգամանքից, որ գրության սկզբում, իբրև աշխատության պատվիրատու, Պետրոս կաթողիկոսի (Գետաղարծի) անունն է հիշվում՝ «Անանիայի վարդապետի հայոց Բան Հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի հայոց վերադիտողի», իսկ վերջում՝ խաչիկ Անեցի կաթողիկոսինը (1058—1065 թթ.), կարելի է եզրակացնել, որ այս երկը հեղինակը սկսել է գրել Պետրոս Գետաղարծի օրոք և ավարտել խաչիկ Անեցի կաթողիկոսի ավտոակալության առաջին տարիներին՝ 1057—1059 թթ. միջոցին², մոտ 58—59 տարեկան հասակում:

Եթե Սանահնեցու մյուս երկերը («Մեկնութիւն Մատթէի», «Մեկնութիւն Զորեքտասան թղթոցն Պօղոսի», «Յաղագս Յովհաննու Մկրտչի» և այլն), նախատեսված լինելով վանական դպրոցների ու վարդապետարանների նեղ շրջանակի համար, գերազանցապես կրոնական բնույթի են, ապա «Հակաճառությունը» աչքի է ընկնում հասարակական լայն հնչեղությամբ: Այստեղ իրենց լավագույն դրսևորումն են գտնում հեղինակի աշխարհայացքի առաջադիմական կողմերը (մարդկային կամքի ինքնիշխանություն, մարդու բնածին ազատության, ամուսնական կյանքի վերաբերյալ): Անանիա Սանահնեցու «Հակաճառությունը» կարևոր սկզբնաղբյուր է ժամանակի սոցիալ-քաղա-

¹ Այս մասին մանրամասն տե՛ս E. Honigman, Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071, nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen, Bruxelles, 1935, S. 198—210.

² Հմտ. Հ. Պ եր պ եր յ ա ն, Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը XI դարուն երկրորդ կեսին, «Հանդես ամսօրյա», 1967, էջ 156:

քական, մշակութային հարաբերությունների ուսումնասիրության համար՝ Այս տեսակետից ուշագրավ են հատկապես «Առ Ներքինացեալսն» և «Վասն պատկերապաշտից» ճառերը, որոնք պարունակում են աղանդավորական ցարդ անհայտ մի շարժման («Ներքինացեալներին») վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև՝ կերպարվեստի տեսության հետ առնչվող փաստեր:

Ամբողջապես դեռևս անտիպ այս գրվածքը հայտնի է երեք խմբագրությանմբ³, որոնց մեջ առավել նախնականը, ըստ երևույթին, Հովհաննես Պլուզ Նրզնկացու կազմած ժողովածուում զետեղվածն է, որի նախադրության մեջ հետևյալն է ծանուցվում. «Նախքան զմտանել քո ի դրունս ընթերցման գրոյս՝ պարտ է մեզ ցուցանել զգիտ այս պատուական և բարեկի գանձուց: Նուստ ի տկար ոգի Յովհանէս Նրզնկացցի սպասաւոր բանի, և իմաստից գրոց սըրբոց ծարաւի յոլով ժամանակօք, և աշխատութեամբ բազմաւ ստացայ գերեջ գիրքս որ են հիմունք հաւատոյ ուղղափառութեան և թէ զմին մի ի նոցանէ դտանէ՝ որ բարեբախտութիւն մեծ և փարթամութիւն անկշիռ համարիմ նմա, մանաւանդ զճաշակ քաղցրութեանն գիտող, զոր և գտի ես յայլ և յայլ տեղի և ժամանակի, և ստացայ գերիս դիրսն և նոցանց դարձեալ ետու գրել և առ միմեանս եղի և արարի մի գիրք. առաջին՝ զԱնանիային զհայոց վարդապետի, երկրորդ՝ Խոսրովկայ Թարգմանչի և հղօր գիտնականի, երրորդ՝ զՍարկաւազ վարդապետին և զմեծ Իմաստասիրի զՀաղբատեցոյ: Եվ թողում զսա, որում յետ իմ ժառանգէք յոգնաջան բարեաց ճոխութիւն ամէնառատ գանձուց փարթամութիւն...»⁴: Նույն խմբագրությանն են հարում նաև Մաշտոցի անվան Մատենադարանի XVII—XVIII դդ. ընդօրինակված №№ 436 (304ա—363ա), 567 (6ա—111բ), 2751 (2ա—82բ) ձեռագրերը, ինչպես նաև Վենետիկի մխիթարյան մատենադարանի հին № 50 ձեռագիրը⁵:

Բ խմբագրությունը⁶, որ ծավալով ու կառուցվածքով զգալիորեն տարբերվում է նախորդից, չունի ենթախորագրեր: Սա ոչ այլ ինչ է, քան Ա խմբագրության ամփոփումն ու համառոտումը, թեպետ տարբեր են խորագիրը և սկզբնամասը: Ա խմբագրության արդեն հայտնի խորագրի և «Որք իմաստութեան են բաղձացեալք...» սկզբի փոխարեն հետևյալ վերտառությունն ու ընդարձակ սկիզբն ունի. Անանիայի հայոց վարդապետի լուծումն մաքառման երկաթնակալն, որք ի կարծիս ճշմարտութեան անյարմար դաւանեն երկակս ի մինն մուծանել բնութիւն, որ է Աստուած Բանն, Աստուած Մարդն Յիսուս Քրիստոս. «Ով պատուականդ ինձ եւ սրտի սիրեցեալդ եղբայր պատուական, հառադատ եւ համասնունդ, յոգնեռանդն սիրով պարապնդեալ եւ հոմայմիավորեալ, հոգեզուարճ խնդութեամբ յալբախմանբար կառուցեալ եւ գերասերտեալ, անփոխաւորաբար պահելով զսահմանս սիրոյն առ մեզ, եւ ի մէնջ պահանջես ի նոյն խոկալ, եւ հատուցանել զարժանն պարտ սիրոյ: Ոչ երկրաւորացս ինչ ցանկա-

³ Այս մասին հանգամանալից տե՛ս «Հայկական մատենագիտություն» հ. Ա, Երևան, 1959, էջ 779—782, նաև՝ Գ. Հովսեփյան, Խոսրովիկ Թարգմանիչ և երկասիրությունը նորին, Վաղարշապատ, 1899, էջ 36—37:

⁴ Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 6453, էջ 2ա:

⁵ Բ. Սարգիսյան, Անանիա Թարգմանիչն և յուր գրական գործոց նմուշներ, Վենետիկ, 1899, էջ Ի, տողատակ:

⁶ Մեր կողմից ղատրոշված Բ խմբագրությունը «Հայկական մատենագիտություն» մեջ (հ. Ա, էջ 781) դիտվել է իբրև Գ խմբագրություն, իսկ վերջինս էլ համապատասխանաբար՝ Բ խմբագրություն:

ցեալ, այլ երկնաւորին բաղձացեալ գանձուն, որ ոգւոց է փրկութիւն: Եւ մեր հայեցեալ ի բաղձան սրտի ձեր, զոր մի անգամ և երկիցս աղաչեցեք, յաժարական սրտի տալ սուղ ինչ որ առ բանի, ընդդէմ եղկաբնակ ժողովոյն Քաղկեդոնի...»: Բ խմբագրութեան, հավանաբար գրչի ձեակերպած, խորագրին հետևող և բուն նյութին նախորդող այս ինքնատիպ նախադրութիւն-ընծայականը, որ, ինչպես նկատեցինք, բացակայում է Ա խմբագրութիւնում, ամենայն հավանականութեամբ Անանիա Սանահնեցուն է: Նյութեր խմբագրելու փորձ ունեցող Անանիա Սանահնեցին միայն, թերևս, կարող էր «վասն դիւրահասութեան ընթերցողաց» ձևափոխել և համառոտել իր իսկ երկասիրութիւնը, ինչպես խմբագրութեան սկզբնահատվածում է ակնարկվում՝ «սուղ ինչ որ առ բանի...»: Երկի Բ խմբագրութիւնն են պարունակում Մաշտոցի անվան Մատենադարանի № 568 (2ա—54ա), 2174 (185ա—196ա), Երուսաղեմի № 963 (429—456), 1001 (1—89), 1353 (1ա—48ա)⁷ ձեռագրերը:

Գ խմբագրութիւնը, ինչպես արդեն դիտվել է, «Դաշանց թղթի» որոշակի ազդեցութիւնն է կրում⁸: Սա նույնպես, ինչպես նախորդը, գլխակարգային ստորաբաժանումներ չունի: Սակայն խորագրով ու սկսվածքով նույնանալով Ա խմբագրութեան խորագրին և սկսվածքին, ընդհանուր կառուցվածքով հետեւում է նրան: Այսպիսով, Գ խմբագրութիւնը, ըստ էութեան, ձևավորվել ու ամբողջացել է հիմք ընդունելով Ա խմբագրութիւնը: Խմբագրութեան մեջ են մտնում աշխատութիւնը պարունակող Մաշտոցի անվան Մատենադարանի № 2678 (139ա—156ա), 2966 (1ա—26բ), 3062 (75ա—96ա) և, ըստ երեւոյթի, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի № 1296 (384—486)⁹ ձեռագրերը:

Բանասիրութեան մեջ կարծիք է հայտնվել, թե Անանիա Սանահնեցու դավանաբանական աշխատութիւնն իրականում ոչ թե նրա, այլ Անանիա Նարեկացու հեղինակածն է¹⁰: Բայց Ուխտանեսի մի տեղեկութեան վրա¹¹ հիմնված այս տեսակետը իրավամբ անընդունելի է համարվում¹²: Բանն այն է, որ Անանիա Նարեկացուն նվիրված հայտնի ընծայականում պատմիչը որոշակիորեն շեշտում է ներեկեղեցական շրջանակներում ընդունված և դավանաբանական նույնաբնույթ երկերում իբրև վերնագիր կենցաղավարող «Հաւատարմատ» անվանումը: Մինչդեռ Սանահնեցու աշխատութիւնը, առկա բոլոր ձեռագրերում, ի տարբերութիւն «Հաւատարմատի», ինչպես արդեն նկատվեց, բացառապես «Բան ընդդէմ երկաբնակաց» կամ «Լուծումն մաքառման երկաբնակացն, որք ի կարծիս ճշմարտութեան անյարմար դաւանեն երկակս ի միմն մութունել բնութիւն» խորագրային ձևերով է հանդիպում: Սրանից զատ կա ևս մի ոչ

7 Տե՛ս նաև Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց (այսուհետեւ՝ Ն. Պողարյան, Ցուցակ), հ. 3, Երուսաղեմ, 1968, էջ 533, հ. 4, Երուսաղեմ, 1969, էջ 1, 626:

8 «Հայկական մատենագիտութիւն», հ. Ա, էջ 781:

9 Ն. Պողարյան, Ցուցակ, հ. 4, էջ 519:

10 Տե՛ս «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յուղափար և ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց...», հրատ. Կարապետ Եպիսկոպոս [Տէր-Մկրտչեան], էջմիածին, 1914, ներածութիւն, էջ CVIII—CIX:

11 Ուխտանեսն Եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 11:

12 Տե՛ս «Հայկական մատենագիտութիւն», հ. Բ, Երևան, 1976, էջ 883—884. նաև՝ Ե. Տ. Լ. Ր-ի նա սյան, Պատմաբանասիրական հետազոտութիւններ, Երևան, 1971, էջ 92—93:

անկարևոր հանգամանք: Բ խմբագրությունն ընդարձակ սկսվածքում պարզ նշվում է, թե Անանիա վարդապետը այս գրությունը շարադրել է հատուկ պատվերով՝ «հայեցեալ ի բաղձան սրտի ձեռք, զոր մի անգամ և երկիցս աղաչեցէք, յաւթարական սրտիւ տալ...»: Այնինչ Ուխտանեսը, որ Անանիա Նարեկացու «Հաւատարմատի» մասին վկայող միակ պատմիչն է, հաղորդում է, թե երբ Անանիա Նարեկացին այցելեց Խաչիկ Արշարունի կաթողիկոսին՝ իր հետ բերելով «նմա ընծայ և պատարագ հոգևոր զգիրս հաւատարմատ, որ ընդդէմ երկաբնակացն,— շարունակում է հեղինակը՝ խոսքն ուղղելով Նարեկացուն,— գոր քո ինքնին խօսեալ ի խորհուրդ հաւատոյ ի ձեռն ճոգւոյն Սրբոյ ի քեզ քնակելոյ...»¹³: Ընդգծված արտահայտությամբ, կարծեք ամբողջացնելու համար նախընթաց նախադասության միտքը, շեշտվում է, որ դավանաբանական այդ գործը Անանիա Նարեկացու սեփական մտահղացման արդյունքն էր: Հիշելով, պարզ տրամաբանությունը հուշում է, որ առհասարակ «ընծայ և պատարագ» կարող էր բերվել ոչ թե հատուկ պատվերով, այլ սրտի թելադրանքով: Արժե նկատի առնել նաև մեկ այլ իրողություն. եթե «Հաւատարմատը» նյութերի ընդգրկման չափով ու նկարագրով ըստ երևույթին ավելի դավանաբանական-աստվածաբանական էր, ապա «Հակաճառությունը» ընդգծված ծիսային նկարագիր ունի: Ծիսական հարցերի համատեղումը դավանաբանական խնդիրներին շատ ավելի հատուկ էր այսպես կոչված «Հակաճառություններին»¹⁴: Անանիա Սանահնեցու «Հակաճառության» մի քանի ենթագլուխները (որպիսիք են «Վասն պատկերապաշտութեան», «Վասն բաղարջին», «Վասն տօնի Ծննդեանն Քրիստոսի» և այլն) հիմնականում ծիսական բնույթ ունեն:

Նոր Հայկազյան բառարանի հեղինակները նկատի առնելով թերևս այս, ինչպես նաև՝ մեզ անհայտ մի շարք այլ իրողություններ, «Հակաճառությունից» բերված «բնաբար ունելով զանյեղափոխութիւն» և «Ասեմք զերկաթն հրացեալ, այլ ոչ անգրադարձի ասել զհորն երկաթացեալ»¹⁵ հատվածների տակ ամենայն իրավամբ Անանիա Սանահնեցու անունն են դնում¹⁶:

Բազմաթիվ և բազմաբնույթ են «Հակաճառության» աղբյուրները, որոնց մեջ հիշատակության արժանի են Անանիա Շիրակացին, Անդրեաս Բյուզանդացին, Անանիա Նարեկացին, մասամբ՝ Սոկրատ Սքոլաստիկոսը, ինչպես նաև՝ «Կնիք հաւատոյ» դավանաբանական երկասիրությունն ու Ստեփանոս Սյունեցու (Դվնեցու) «Վասն անապականութեան մարմնոյն» վերտառությունը:

«Հակաճառության» «Վասն տօնի Ծննդեանն Քրիստոսի» գլուխը, որ մի շարք ձեռագրերում, ինչպես արդեն նկատվել է¹⁷, Անանիա Շիրակացու անունով «Ի Յայտնութիւն Տեառն և Փրկչին» խորագիրն է կրում, բնագրային ան-

¹³ Ուխտանես՝ Ե պիսկոպոս, Պատմութիւն հայոց, էջ 11:

¹⁴ Հմմտ. «Կնիք Հաւատոյ...», Ներածութիւն, էջ CIX:

¹⁵ ՄՄ, ձեռ. № 6453, էջ 54ա—բ:

¹⁶ «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 208, 686: Անանիաների համանունության պարագան, դավանաբանական այս երկի հեղինակային պատկանելության խնդրում, ժամանակին լուրջ տարակույսների տեղիք է տվել. տե՛ս Orazione Sinodale di S. Nierses Lampronense... recata in lingua Italiana dall'Armena, ed. illustrata con annotazioni dal P. Pasquale Aucher, Venezia, 1812, p. 130, annot. 245.

¹⁷ «Հայկական մատենագիտություն», հ. Ա, էջ 780:

նշան շեղումներով նույնանում է Շիրակացու այս ճառի մինչև «սակս ոչ թիրեցուր ի ճանապարհէ հարցն» բառերն ընկած հատվածի հետ¹⁸։ Իսկ ճառական հատվածում Մակար Ա Երուսաղեմացու կանոնական թղթի ընդարձակ խմբագրությունից բերված հատվածը՝ «զերեքօրեայ զթաղումն Տեառն մերոյ... ի կեանս յաւիտեանականս»¹⁹, հեղինակին հայտնի է փաստորեն Անանիա Շիրակացու «Ի Յայտնութիւն Տեառն» ճառի շնորհիվ։

Անանիա Շիրակացու խնդրո առարկա ճառի և Սանահնեցու «Հակաճառութիւն» նույնական հատվածից է ծագում միաժամանակ «Վկայութիւնք վասն Ծննդեան Քրիստոսի և Մկրտութեան տաւնել ի միում աւուր ի յունուարի վեցն» խորագրով տոմարական հատակոտորների ժողովածուի մեջ «Անանիայի հայոց վարդապետի»-ից բերված «Եւ արդ տեսցուք զայն, որ ասէն յոյնք, թէ յորում աւուր պապանձեցաւ Զաքարիայ... ԻՅ-ն դեկտեմբերի Դաւթի և Յակոբայ տաւնմք» բնագրային կտորը²⁰։ Վերջինիս մինչև «աւետիքն ըստ հոռմայեցւոցն» հատվածը զգալիորեն այլափոխված ամփոփումն ու խմբագրումն է նույնական «Արդ պապանձումն Զաքարիայի ճշմարիտ ի Ժ...որ է Զ ապրիլի ըստ հոռմայեցւոցն» հատվածի²¹։ «Աւետիքն ըստ հոռմայեցւոցն» բառերին հետևող (Շիրակացու այս և առհասարակ նրա երկերում բացակայող) վերջին հատվածը, սակայն, իմաստով բացառապես Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւն» «յետ այսորիկ ի սրբոյն Կիրիլէ... ի դեկտեմբերի ի ԻՅ-ն դտօն Դաւթի և Յակոբու հրամայեաց առնել» բնագրային կտորի հետ է համերաշխվում։ Սա նշանակում է, որ «Անանիայի հայոց վարդապետի» անվամբ բերված խնդրո առարկա տոմարական հատվածը, ամենայն հավանականութամբ, Անանիա Սանահնեցու՝ ինքնուրույնության հավակնող, տոմարագիտական գործերից մեկն է²²։

Անանիա Շիրակացուն վերագրվող «Ժամանակագրութիւն» որոշակի ապօրինիությունն է նկատվում Սանահնեցու երկի «Վասն ժողովոյն Քաղկեդոնի» և նթախորագրով բաժնի վրա։ Աշխարհագրական անունների հետ առնչվող այստեղ առկա տվյալները ծագում են «Ժամանակագրութիւնից»²³։ Շիրա-

18 ՄՄ, ձեռ. № 6453, էջ 66ա—71բ։ Աշ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 283—290, տ. 9։

19 Տե՛ս Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, Երևան, 1971, էջ 223 տ. 4—9, նաև՝ Ներածություն, էջ XCIII—XCVII. հմմտ. ՄՄ, ձեռ. № 6453, էջ 66բ—67ա, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 284 տ. 27—32։

20 Տե՛ս «Արարատ», հավելված, 1896, էջ 52. նաև՝ ՄՄ, ձեռ. № 4425, էջ 188բ—189բ, Երուսաղեմի № 2526, էջ 222—224 (ն. Պողոսյան, Ցուցակ, հ. 8, Երուսաղեմ, 1977, էջ 204—205) և Արմաշի № 180, էջ 153 (Հ. Թոփճյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 321)։

21 ՄՄ, ձեռ. № 6453, էջ 70բ—71ա, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 288—289 տ. 41—25։

22 Այսուամենայնիվ թվում է, թե հեղինակը ծանոթ է ոչ միայն Հիպոդիտոս Բոսորացու «Բան ի Ծննունդն եւ Մկրտութիւն Տեառն» խորագրով, անհարադատ համարվող տոմարական գործին (հմմտ. P. Martin, C. Pitra, Analecta Sacra et Classica, t. IV, Paris, 1883, p. 70—71, 336—337), այլև, որ առավել հավանական է, «Միքայելի Աղուտնից հայրապետին խնդր յաղագս պապանձման Զաքարիայի և Ծննդեանն և Յայտնութեան Փրկչին ընդդէմ երկարեակաց» գրությունը («Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուտնից աշխարհի», Խիֆլիս, 1912, էջ 361—362)։

23 Տե՛ս Բ. Սարգիսեան, «Անանուն ժամանակագրութիւն խմբագիր յօրինեալ յէ դարու», Վենետիկ, 1904։

կացու «Յայտնություն» ճառին հետևում է Անդրեաս Բյուզանդացու «Երկու-հարյուրյակի» տոմարական շորորոդ կանոնից քաղված հետևյալ բեկորը. «Է և Ժ երրորդն յունվարի, որ է օր Մենդեան և Յայտնության Փրկչին մերոյ, ի միում աւոր հանդիպին յամենայն տարւոջ» (էջ 71բ): Նշված հատվածին հիմաստով մոտենում է «Երկուհարյուրյակի» Գ կանոնից բերված «Խաւսք Անդրեասի Իմաստասիրի վասն Զատկաց» տոմարական գրությանը հետևող հատվածը. «Նւ վեցերորդ յունուարի, յորում լինի արն Յայտնության Տեառն մերոյ ի Ժ-երրորդում ամսեանն ի մի ար դիպին»²⁴: Անդրեաս Բյուզանդացու երկասիրությունը, որ, ինչպես քննությունն է պարզում, հեղինակի անվամբ հայտնի «Վասն սրբոյն Պասեքին յետ և յառաջ խաղալոյ և վասն դրութեան երկերիւրեակին» խորագրով գրության երկրորդ մասի ամփոփումն է, առավել նախնական ու հարազատ բեկորն է նույն այդ «Վասն սրբոյն Պասեքին...» (հետագա հավելումներով այժմ հայտնի) տոմարական շարադրանքի²⁵: № 1999 ձեռագրում պարունակվող այդ, նախօրինակին շատ ավելի մոտ համարվող, հատվածի և «Հակաճառության» մեջ վկայաբերված մասունքի համադրումից իր հերթին պարզվում է, որ վերջինը ոչ այլ ինչ է, քան առաջինի համառոտումը կամ խմբագրումը: Տոմարի պատմությունից քաջ հայտնի է, որ հայոց մեջ ծնունդն ու հայտնությունը նշվել ու նշվում են նույն օրը՝ հունվարի վեցին: Վկայաբերված հատվածի հիմաստը նշմարելիորեն աղավաղված է: Ըստ երևույթին ընդօրինակող գրիչներն իրենք համառոտելիս անուշադրություն մը բնագրից դուրս են թողել «մարտի», «ապրիլի» և «վեցերորդն» բառերը, ինչպես նաև՝ նույնքան անուշադրությամբ, Գ-ն ընկալել իբրև ղ կանոն և սրանով փաստորեն տեղիք տվել նման շփոթի²⁶: Եվ հիշել. «Հակաճառության» մեջ բերված հատվածն իր հիմաստով անհարիր է ղ կանոնին, քանի որ վերջինս, համաձայն երկի ընդարձակ տարբերակի, «ցուցանէ, թէ յորում ամի է ամիսն նահանջեալ»²⁷: Մինչդեռ մեր օրինակում խոսքը բացառապես ծննդյան և հայտնության օրվան է վերաբերում: Հետևաբար, «Հակաճառության» անդրեասյան եղծված մասը կարելի է սրբագրել Մաշտոցի անվան Մատենադարանի № 1999 ձեռագրի օգնությամբ:

Սովորատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական Պատմությունը» հեղինակն անտարակույս իր ձեռքի տակ է ունեցել: Այս մասին է վկայում «Հակաճառության» «Վասն շորից աթոռոցն» գլխի սկզբնամասի «...գոր այժմ ունի Կոնստանդինուպոլիս, ուր հարիւր և յիսունքն ժողովեցան յաղագս հոգեմարտին յաւուրս Թէոդոսի Մեծի, որպէս պատմէ Սովրատէս»²⁸ հատվածը, որն ակնարկում է Սովրատի հիշյալ աշխատության է, Ը գլուխները, ուր խոսվում է Մեծն Թեոդոս կայսեր ջանքերով 381 թ. Կ. Պոլսի հայտնի տիեզերաժողովի

²⁴ ՄՄ, ձեռ. № 1999, էջ 19բ—20ա:

²⁵ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 1973, էջ 251ա—255բ (այսպես կոչված «ընդարձակ տարբերակ» Այս մասին տե՛ս է դ. Աղա յան, Անդրեաս Բյուզանդացու օրկուհարյուրամյա տոնացույցը և նրա հայերեն թարգմանությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 2, էջ 122—133):

²⁶ Ձեռագրային բաղմադարյան ավանդույթում լայնորեն կենցաղավարող մի երևույթ է սա, որ բացատրելի է թվում իրերի ներկա վիճակում ևս. Այս մասին առհասարակ տե՛ս Օ. В. Малкова, Ошибки писцов и лингвистическая интерпретация древних текстов, «Вопросы языкознания», 1979, № 6, с. 108—120.

²⁷ է դ. Աղա յան, նշվ. աշխ., էջ 138:

²⁸ Տե՛ս «Սովրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն... աշխատասիրութեամբ Մեսրոպ վ. Տէր-Մովսէսեան», Վաղարշապատ, 1897, էջ 413—415:

հրավիրման հանգամանքների մասին²⁹։ «Եկեղեցական պատմության» վերաբերյալ Սանահնեցու քաջատեղյակությունը լավագույնս ի հայտ է գալիս «Հակաճառության» «Առ ապականացու ասողսն զմարմին Տեառն» գլխում, որ հեղինակը, կոահելով գաղափարական հակառակորդների՝ Քրիստոսի մարմնի «ապականության» մասին առաջ քաշած դրույթի Սոկրատի Պատմությանից քաղված լինելը, գրում է. «Եւ արդ եթէ ընդդիմաբանէք մեզ ի Սոկրատայ Պատմութեան առնելով վկայութիւն, որ յաւուր հինգշաբաթու յետ ընթերցան ոչ ամենայն աշխարհի, այլ թէ ոմանք տգիտութեամբ հաղորդին, և մեք չեմք անտեղեակ այնմ», որով հեղինակն ակնարկում է «Եկեղեցական Պատմության» ժ գլուխը³⁰։

«Հակաճառության» «Պատճառ երից սրբասացութեան, զոր հայք ի դեմս Որդույ ասէն» ենթախորագրով ժ ճառի սկզբում Անանիա Սանահնեցին գրում է. «...բայց նախ դյառաջագրեալ զխորհուրդ խաչին տեսչիւր սկզբնաւորեալ ի կենաց տնկոյն, որ ի դրախտին, դի անդուստ ի վերուստ իսկ արկեալ էր ի միտ երեքսրեան տէրութեան զխորհուրդ փրկագործ խաչելութեան Աստուածն Բանի, զոր յայլում տեղուջ քաղեալ եմ եւ եղեալ. եւ ապա զայս, զոր յԱնանիա վարդապետին գրացն համառոտի ժողովեցի»³¹։ Ինչպես արդեն տեսանք մեր հեղինակը ոչ թե «համառոտի ժողովում», այլ սոսկ մեկ ընդարձակ բանաբարում է կատարում Անանիա Շիրակացու «Հայտնության» ճառից, այն էլ միայն ժԴ՝ «Վասն տօնի Ծննդեան Քրիստոսի» գլխում։ Մինչդեռ, ելնելով ընդգծված արտահայտությունից, խոսքն այստեղ ոչ թե ժԴ գլխի մասին է, ինչպես Վ. Հակոբյանն է կարծում³², այլ բացառապես «Հակաճառության» ժ ժողովին է վերաբերում։ Այնքանով, որքանով առայժմ անհայտ է Անանիա Շիրակացու անվամբ «երից սրբասացության» հետ առնչվող որևէ գրվածք, հարկ է ենթադրել (եթե ոչ եղրակացնել), որ վկայաբերված հատվածում հիշվող Անանիա վարդապետը Անանիա Նարեկացին է, իսկ «փրկագործ խաչելության խորհուրդին» նվիրված «Հակաճառության» նախընթաց (անտարակուս Քրիստոսի ծննդյան տոնի հետ ոչնչով չկապվող) բաժիններից մեկը, ինչպես նաև «Պատճառ երից սրբասացութեան» բաժինը շարադրելիս Անանիա վարդապետի գրքից ծաղկաքաղ անելու մասին Սանահնեցու կատարած հիշեցումը՝ «Անանիա վարդապետին գրոց համառօտի ժողովեցի», որոշակի ակնարկ է Անանիա Նարեկացու դավանաբանական աշխատության՝ «Հաւատարմատի» մասին։ Թվում է, մեկ ամբողջական, զուտ դավանաբանական աշխատությունից միայն հնարավոր կլիներ «խաչելության խորհուրդի» և «երից սրբասացության» հետ առնչվող տարբեր հատվածներ բանաքաղել։ Հետևաբար պարզ է, որ Անանիա Սանահնեցին օգտվել է Անանիա Նարեկացու

29 ՄՄ, ձեռ. № 6453, էջ 63ա։

30 «Հակաճառության» «Ի յԱղուանից պատմութենէն» (Թ) և «Պատճառ բաժանմանն Վրաց» (Ժ) գլուխները բանաքաղված են Մովսես Կաղանկատվացու «Աղվանից Պատմությունից» (տե՛ս էջ 306, 309—313)։ Կաղանկատվացու տեքստի և «Հակաճառության» այս գլուխների բնագրական, աղբյուրագիտական քննությունն իրականացրել է Լ. Մելիքսեթ-Բեկը՝ զուգահեռելով միմյանց հետ համեմառադրելով հատվածները. տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, «Իրատիւն մեհարցաւ Նոյնեմբար, տա մատի ջոնառնա, Նոյնեմբար-ժողովեցաւ շրտօյրտոյն Նոյնեմբար» ընթերցանություն, Երևան, 1928, թ. 112—120.

31 ՄՄ, ձեռ. № 6453, էջ 72բ։

32 «Կանոնագիրք հայոց», հ. Բ, Ներածություն, էջ XCVI:

«Հաւատարմատից»։ Որպեսզի փոքրիշատե վավերական դիտվի առաջադրելը վարկածը, հարկ է քննության առնել վարդան Այդեկցու «Արմատ հաւատոյ» (կամ լրիվ խորագրով՝ «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ») դավանաբանական աշխատութեան մեջ Անանիայի անվամբ բերված հատվածները, որոնք բոլորն էլ զետեղված են «Ի մեծափառ հաւատոյ գրոցն Անանիայի հայոց վարդապետի» խորագրի ներքո³³։ Քննությունից նախ նկատվում է, որ Անանիա վարդապետի անվամբ բերված հատվածները «Հաւատոյ գիր» անունը կրող աշխատությունից են քաղված, և երկրորդ՝ որ այդ հինգ հատվածներին անմիջապես հետևում է Գրիգոր Նարեկացուց բերված մի հատակոտոր. վերջինիս, հայրաբանական մի շարք քաղվածքներից հետո միայն, հաջորդում է Քրիստոսի ծննդյան օրվա հետ առնչվող «Անանիայի հայոց վարդապետի», այն է՝ Անանիա Սանահնեցու տոմարագիտական արդեն հայտնի հաշվարկը՝ «Տեսցուք և զայն...»³⁴։ Ելնելով իրերի առկա վիճակից (նկատի ունենք նախ, մի կողմից, «Հաւատոյ գիր» անվան որոշակի մերձավորությունը «Հավատարմատին» և, մյուս կողմից, «Արմատ հաւատոյ»-ում բերված հատվածների հերթագայման տրամաբանությունը)՝ կարելի է մտածել, որ Անանիայի անվամբ առկուլված հատվածները ոչ այլ ինչ են, քան բեկորները Անանիա Նարեկացու «Հաւատարմատի», որին և ժամանակագրական կարգով հետևել է Գրիգոր Նարեկացու հատվածը։ Տրամաբանական է, որ ուսուցչից հետո պետք է վկայակոչվեր նրա նշանավոր աշակերտը³⁵։

Հայագիտության մեջ, սակայն, կարծիք է հայտնվել, թե «Արմատ հաւատոյ»-ում բերված այդ հատվածները, որոնք հինգն են, «պետք է որ» Անանիա Սանահնեցու «Հակաճառությունից» քաղված լինեն³⁶։ Սակայն ինչպես քննությունն է ցույց տալիս, Անանիա Սանահնեցու այդ աշխատության խըմբագրություններից և ոչ մեկում ինքուր առարկա հատվածները չկան։ Թվում է, այս իրողությունը կարող է մեկ անգամ ևս փաստել նշված հատվածների՝ Անանիա Նարեկացուն պատկանելը³⁷ և, միաժամանակ, հնարավորություն ընձեռել որոշ վստահությամբ (անշուշտ նկատի առնելով նաև Սանահնեցու «Հակաճառության» ժեզլի, վերը դիտարկված, խոստովանություն-հիշեցումը այն մասին, թե «զխորհուրդ փրկագործ խաչելութեան Աստուածն Բանի, զոր յայլում տեղոջ քաղեալ եմ եւ եղեալ») խոսելու Անանիա Սանահնեցու «Հակաճառության» վրա Անանիա Նարեկացու «Հաւատարմատի» թողած ազդեցության մասին, որը բավականին ակներև է։ Զուգադրաբար բերենք այդ իրողությունը լավագույնս ներկայացնող մեկական հատված «Հավատարմատից» և «Հակաճառությունից»։

33 ՄՄ, ձեռ. № 4425, էջ 181ա—բ։

34 Քաղվածքների հերթագայությունը դրեթե նույնությամբ է գնում նաև Երուսաղեմի Մ 2526 ձեռագրում (էջ 176—222)։ Ն. Պողոսյան, Յուդակ, հ. 8, էջ 204—206։

35 Հմմտ. «Կնիք հաւատոյ», ներածություն, էջ CIX։

36 «Հակական մատենագիտություն», հ. Ա, էջ 782։

37 Ըստ երևույթին Անանիա Նարեկացու «Հավատարմատից» է բերված վարդան Այդեկցու երկում առկա դարձյալ «Անանիայի հայոց վարդապետի» անվամբ «Արդ որ ոչ խոստովանի զմարմինն Տեառն յետ միանալոյն անբաժանելի, անմահ և անապական...» սկսվածքով մատունքը (ՄՄ, ձեռ. № 4425, էջ 178բ), որը բացակայում է «Հակաճառության» մեջ։

«Հատարմատ»

«Եւ խառնումն որպէս հուր ընդ ոսկի
և ընդ երկաթոյ, որ ոչ յեղաշրջէ զնիւ-
թոյն ընտրին, այլ յիւրն փոխարկեսցէ
ընտրին և հաւասար է իւրում լուսոյն,
և կամ որպէս պարզութիւն լուսոյ ընդ
օդոյ խառնեալ, և կամ որպէս հողի և
մարմին, զի միաւորեալ են անշփոթ
և մի՛ կոչի ընտրին մարդոյս, ալիպէս
և Բանն Աստուծոյ միաւորեալ է ի վեր
քան զմիտս և անշփոթ մնացեալ»:

(ՄՄ, ձեռ. № 4425, էջ 181ա)

«Հակաճառութիւն»

«...և որպէս հուր ընդ երկաթոյ միա-
ցեալ կամ լուս ընդ օդս և հուր զընու-
թին երկաթոյ ընկղմէ և լոյս զօդս լու-
սաւորէ: Եւ որպէս հուր զընտրին եր-
կաթոյն փոփոխէ յիւր լուսաւորութիւն և
լոյս զօդս լուսաւորէ: Սոյնպէս և հուր
աստուածութեան զմարմինն մաքրեալ և
պարզեալ և ձգեալ ի ծայր աստուածու-
թեան միացոյց յինքեան և աստուածա-
ցոյց»:

(ՄՄ, ձեռ. № 6453, էջ 20բ):

Հանդիպադրված հատվածների իմաստային և ռեալական նմանությունները հետևանք են ոչ միայն դրանց՝ դավանաբանական միևնույն խնդրին՝ Քրիստոսի անապականությանը նվիրված լինելու իրողության, այլև մատենագրական միևնույն աղբյուրից բերվելու հանգամանքի: Իր «Հակաճառության» մեկ այլ հատվածում, անդրադառնալով քրիստոսաբանական նույն այս հարցին, Անանիա Սանահնեցին դրում է. «Եւ արդ կամիմ, զի յօրինակէ հրոյ յայտ ցուցից զմիաւորութիւն Բանին և մարմնոյն, որպէս Ս. Բարսեղ և Դէոնիսիոս յայտ ցուցանէն մեղ, զի որպէս երկաթ ընդ հրոյ միաբանեալ՝ ընդունի զհուրն և ոչ փոխարկաբար, այլ փոխադրաբար, զիւր բնական որակութիւնսն, և ոչ զիրսն, այլ զնորայն ներգործէ զօրութիւնսն: Իսկ բնութիւն հրոյն ոչ շփոթ կամ ի բաց զնէ զծայր որակութեան, բնաբար ունելով զանյեղափոխութիւն ի միաւորելն երկաթոյն, այլ զնորայն փոխադրէ յիւրն ունակութիւն ըստ զօրութեան բնաբար ունելով զանյեղափոխութիւն, թէպէտ և ընդ ամենայն գրոյս ունի զհաղորդութիւն: Եւ արդ միացեալ ընդ երկաթոյ, ոչ ինչ կրէ ի նորայց որակութեանց, այլ պարզեալ ձգէ ի ծայրս որակութեան իւրոյն բնութեան: Զորակութիւնս երկաթոյն ասեմ զցրտութիւն և զսեւութիւն, լուսափայլ և ջերմին փոխադրեալ, վասն որոյ ասեմք զերկաթն հրացեալ, այլ ոչ անդրադարձի ասել զհուրն երկաթացեալ, զի զներհակա որակութեան երկաթոյն հուրն առ իւրն վերաբերէ բնութիւն, ի լաւն զվատթարն փոխադրելով, ինքն ոչինչ առեալ ի նորայցոյն, բայց միայն ըստ ձևոյ և ըստ չափոյ երկաթոյն ձևակերպեալ. Եւ այսպէս անմբռնելի բնութիւն հրոյն ըմբռնի ի ձեռն երկաթոյն և ընդ կռուանաւ անկանի: Այլ ըստ բնութեան շարշարելի և անայլայլելի է Աստուած Բան, զի որ միանգամայն ի տանջանս ըմբռնի, այլայլէ, իսկ հուր ոչ ի տանջանս ըմբռնի և այլայլի: Թէպէտ և ընդ երկաթոյ միաւորի անբաժանաբար, այլ ոչ կրէ զնորայնս, վասն զի անյեղափոխ է ունակացեալ, զի պարզաբար մեկին ունի զօրութիւն և անկար է փոխադրել յայլ ինչ»³⁸: Այս ընդարձակ հատվածը խմբագրումն ու մասամբ իմաստային հառաջաբերությունն է Բարսեղ Կեսարացու «Ի ծնունդն Քրիստոսի» ճառի և Դիոնիսիոս Արիոսապագացու «Յաղագս աստուածային անուանց» երկի «Եւ զի՛նչ արինակ ի մարմնում աստուածութիւնն, որպէս հուր յերկաթում ոչ փոխարկաբար, այլ փոխադրաբար... ոչ

38 ՄՄ, ձեռ. № 6453, էջ 54ա—բ:

փոխատրեաց ի նա զիւր տկարութիւնն»³⁹ և «զամենեցունց զլոյսն աւոյցն պարունակելով՝ որոշել և տանել առանց միոյդ միւսն... և նիւթեղէն հրոյ կազմութենէ լուսոյ...»⁴⁰ բնագրային կաորներէ: Զուգահեռ հատվածների բաշխումից, սակայն, պարզ է դառնում, որ դրանք, ծագելով միևնույն աղբյուրից, այսուամենայնիվ որոշակի աղբյուրի մեջ են միմյանց նկատմամբ, մասնավորապես եթե նկատի առնենք նրանցում առկա համեմատությունների («հուր ընդ երկաթոյ», «լոյս ընդ օդս») հերթագայման նույնականությունը: Մինչդեռ այդ երկու համեմատությունները Բարսեղ Կեսարացու ու Դիոնիսիոս Արիոսպազացու վերոնշյալ գործերից և ոչ մեկում հանդես չեն գալիս միաժամանակ: Իրենց ամբողջությամբ ծագելով միևնույն աղբյուրից՝ իմաստային և մասամբ բնագրային համակառուցի մեջ այդ համեմատությունները հարադատ են մնացել Անանիա Նարեկացու «Հաւատարմատի» համադրված հատվածին: Այսպիսով, միանգամայն բացորոշ է, որ Անանիա Սանահնեցին օգտվել է Անանիա Նարեկացու «Հաւատարմատից»:

Անանիա Սանահնեցու «Հաւաճառության» աղբյուրների քննությունը հնարավորություն է տալիս վեր հանել պատմադրական, դավանաբանական աղբյուրների այն շարքը⁴¹, որ կիրառվում էր ի հակակշիռ հայերի դեմ Բյուզանդիայի գործ դրած եկեղեցաքաղաքական, գաղափարաբանական ճնշման:

«ОПРОВЕРЖЕНИЕ» АНАНИИ САНАННЕЦИ

А. О. КЕСЕЯН

(Резюме)

Анания Санаһнеци (XI в.)—один из видных представителей армянской средневековой литературы. Наряду с многими его сочинениями до нас дошел труд «Опровержение» («Против днофизитов», 1057—59 гг.). Анализ этого труда выявляет источники (исторические, полемические), которые служили автору оружием в идеологической борьбе против церковно-политической экспансии Византии. Заключая в себе главные принципы и категории монофизитского вероучения, он в то же время является весьма интересным источником для изучения общественной идеологии средневековой Армении на данном этапе.

39 Տե՛ս «Երանելոյն Բարսղի եպիսկոպոսի կապաղովկացոյ ասացեալ ի Սնունդն Քրիստոսի» (հրատ. Հ. Գ. Տէր-Պողոսյանի), «Հանդես ամսօրյա», 1968, էջ 422 տ. 44—61: Այս ստան հեռավոր ակնարկ կա նաև, այժմ Աթանաս Ալեքսանդրացուն վերագրող, «Տեսութիւն ի մարմնաւորութիւն Փրկչին Բարսղի ուղղափառի և Ասողոնարի հերձուածողի» խորագրով դավանաբանական գրության մեջ. տե՛ս ՄՄ, ձեռ. № 822, էջ 165բ:

40 Տե՛ս ՄՄ, ձեռ. № 167, էջ 157ա—բ: Խնդրո առարկա հատվածի համար հավասարապես աղբյուր կարող էր ծառայել նաև Սեբերիանոս Գաբաղացու ճառերից մեկի «Առ երկաթ և մխեա ի բովս հրոյ... բայց գոյնն հրոյ գոյնն առնու» բնագրային հատվածը («Սեբերիանոսի եմենացոյ Գաբաղացոյ եպիսկոպոսի ճառք ժն», Վենետիկ, 1830, էջ 116, նաև՝ «Կնիք հաւատոյ», էջ 98 տ. 16—25): Հատվածը այս կամ այն չափով օգտագործվել է նաև Սեբաստիայի Մետրապոլիտի պատասխան թղթում («Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 212) և Մովսէս Երզնկացու «Պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր Երեց» դասասանական գրության մեջ (հրատ. Ե. Պետրոսյանի, «էջմիածին», 1975, Ա, էջ 34 տ. 18—20):

41 Դավանաբանական աղբյուրների հանգամանակից քննությունը տե՛ս «էջմիածին», 1981, № է, էջ 49—52: